շալի՝ Վեհափառ Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց Լեհաստանի Հանրապետության իշխանություններին՝ 2005 թվականին Լեհաստանի Սեյմում Հայոց Ցեղասպանության ճանաչման, ինչպես նաև հայ համայնքի հանդեպ մշտապես ցուցաբերվող ազնիվ ու բարյացակամ վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նաև շնորհավորեց պրն Բորուսևիչին նոյեմբերի 11-ի՝ Լեհաստանի Անկախության օրվա առիթով՝ մաղթելով լեհ աստվածասեր ժողովրդին խաղաղ և բարօր կյանք:

Իր հերթին պրն Բորուսևիչը, խոսելով լեհ-հայկական դարավոր հարաբերությունների մասին, նշեց Լեհաստանի պատմության մեջ հայերի կարևոր ներդրման մասին: «Ճիշտ է, ներկայիս մեր հարաբերություններն այդչափ սերտ չեն, ինչպես անցյալում, սակայն համակրանքը Հայաստանի և հայերի հանդեպ պահպանվում է...: Մենք հոգևոր կապ ենք զգում հայ ժողովրդի հետ, ունենք նաև պատմական ընդհանրության գիտակցումը»,- նշեց Սենատի Մարշալը:

Հանդիպման ընթացքին Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ Լեհաստանում ապրող հայ համայնքի հոգևոր և եկեղեցական կյանքի կազմակերպման խնդրին: Այս առնչությամբ պրն Բորուսևիչը տեղեկացրեց, որ առաջիկայում Լեհաստանի իշխանությունները պաշտոնապես կգրանցեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և համայնքը:

Հանդիպմանը խոսվեց նաև երկու ժողովուրդների կյանքում իրենց Եկեղեցիների կարևոր առաքելության մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Կանադայի Համադաշնության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ռալֆ Լիսիշինին՝ տիկնոջ հետ (նստավայրը՝ Մոսկվա):

Նորին Սրբությունը, շնորհավորելով պրն Լիսիշինին դեսպանի պաշտոնում նշանակման առիթով, վստահություն հայտնեց, որ դեսպանը որոշապես պիտի նպաստի Հայաստանի և Կանադայի միջև հարաբերությունների սերտացմանը և տարբեր ոլորտներում առկա գործակցության առավել զորացմանը: Վեհափառ Հայրապետն ի դեմս դեսպանի նաև իր գնահատանքը հայտնեց Կանադայի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի, ինչպես նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար:

Հանդիպմանը խոսվեց նաև միջեկեղեցական հարաբերություններին և միջկրոնական երկխոսություններին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասնակցության և դերի մասին: Անդրադարձ կատարվեց տարածաշրջանում առկա խնդիրներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն

Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմեսովին:

Նորին Սրբությունը շնորհավորեց պրն Սմեսովին դեսպանի պաշտոնում նշանակման առիթով՝ մաղթելով արդյունավոր և հաջող գործունեություն: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների և երկրների միջև առկա բարեկամական հարաբերություններին և սերտ համագործակցությանը՝ նշելով, որ Ֆրանսիան առանձնահատուկ տեղ է գրավում հայոց կյանքում: Գարեգին Բ Կաթողիկոսն ի դեմս դեսպանի շնորհակալություն հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին և ժողովրդին՝ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող սիրալիր վերաբերմունքի և գնահատելի աջակցության համար:

Իր հերթին դեսպանը, ուրախություն հայտնելով այցի առնչությամբ, հավաստիացրեց, որ կշարունակի նպաստել երկու երկրների հարաբերությունների առավել խորացմանը:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի և ներկայիս գործունեության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ